



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

N 402 - Ա

18 հոկտեմբերի 2019 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ
ՔԱԶՄԱՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 13-ի № 751-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ և 18-րդ կետերի պահանջները

Կարգադրում եմ՝

1. Երեխայի խնամքը և դաստիարակությունը խնամատար ընտանիքում կազմակերպելու նպատակով, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանում ստեղծել բազմամասնագիտական խումբ՝ հետևյալ կազմով՝

- Գալոյան Մամիկոն - մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի վարիչ
- Հովհաննիսյան Նորիկ - մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ /իրավագետ/
- Խաչատրյան Սեդա - մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ /հոգեբան/
- Կոստանյան Արմինե - մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի կրտսեր մասնագետ /սոցիալական աշխատող/
- Արևշատյան Լավրիկ - մարզպետարանի սոցիալական աջակցության Գավառի տարածքային գործակալության բաժնի պետ

2. Բազմամասնագիտական խմբին՝ աշխատանքներն իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 13-ի № 751-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ՝ Նարեկ Գրիգորյանին:

18.10.2019

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ